1843 1899

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԷՍ

ՄԱՅԻՍ ՀԱՏՈՐ ԾԷ.



## ԵՐՐՈՐԴ ՅՈԲԵԼԵԱՆ ՄԽԻԹԱՐԱՅ

# ԿԱՄՔ ՍԻՐՈՒՀԻՈՅՆ

ՆՈՒՌ· կայ բնութիւն՝ բուռն յետ լա-
(լեաց գերաշխար·
Սեաւ ծածկէ քող ըզկուղս լերանց եւ զմայրիս·
Նրնջեն համայնք ի տիեզերք յորրանիս,
Նընջէ սոխակն եւս յմնտուռ։
Նընջես եւ դու, ո՛վ վեհ արփի լուսածիր,
Ի սեաւըն քող զաչսըդ ծածկեալ՝ կաս Թա-
(քուն·
Նընջես եւ դու, ո՜հ, յաւերակս Հայոց տուն,
Նընջէ յաւէժ Մասեաց ծիր։
Յայրաստեան ծործորսն Անմահ Վեհն Ոգի՝
Ի սառնապատ երկիր հեղու յաչաց ցօղ,
Որ մըշտափայլ բըբացն արկեալ են ի քող՝
Փետուրք Թեւոց լուսարփի։
Նընջես եւ դու, մի՛տք իմ... Ո՛հ, մի՛. լե՛ր
(ըզգաստ·
Հոլաթեւեան տա՛ր զիս սլացիւքդ հոգեկիր,
Ուր մէն ամբիծ տըքնի տատրակ ուխտադիր՝
Սիրուհւոյ Մօրն յառագաստ։

Ի լըռութեան զանխուլ յայս ժամ տը-
(խրատուգ՝
Նա լոկ յաւէժ աննինջ, յաւէժ զըւար-
(Թուն,
Սիրանըւագ յերկինս ի վեր զցայգն ի բուն
Մընջէ ձայնիւ ողորմուկ։
Սահեալք աստեղց վըսեմաձեմ բոյլք անցին
Հանգեան՝ զըրքացըն կափուցեալ շող փայ-
(լուն·
Խոնարհ շիջաւ եւ լուսընկայն յիւրն ի քուն...
Հընչեն վուվուք տատրակին·
Ձայնքն ողբերգակ տան արձագանգս յաւս
երկնից՝
Ի փարելի Սիրուհւոյն սիրտ մայրական·
Իջանէ Կոյսն յաստեղազարդն ի խորան,
Ձայն փոխարկէ գըթալից.
«Զի՞նչ դու խընդրես յինէն, որդեակ Մը-
(խիթար»·
«Ըզքոյին կամս եւեթ կամիմ, Սիրոյ Մայր»...



digitised by A.R.A.R.@

**Դէմքն ի ժըմիտ՝ չըլէ յերկինս Մայրն Հաստա-**
**(չին . . .**

**Յառնէ կանգնի պատանին...**
**Յառնէ կանգնի Համդըրին յայիս Սուրբ**
**(Ղազար.**
**Կանգնին սըրտի, մըտաց, հոգւոց վարժա-**
**(րանք.**
**Կանգնի վեհից նախնեաց քարքառ սիրա-**
**(վանգ,**
**Բիւր երկք, բիւր թերթք, գիրք հազար.**
**Յառնեն կանգնին թըմբըեալ հոգիք վեհա-**
**(զուն,**
**Կանգնին աւերք, կանգնին տաճարք, կան-**
**(գնի կայ**
**Հինաւուրց պերճն անուն եւ տուն եւ ազգ**
**(հայ...**
**Եւ լըցան « Կամք Սիրուհւոյն ».**

Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՆ

# ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀՕՐ

## ՏԱՐԵԴԱՐՁ ՅԻՇԱՏԱԿԻՆ

*ՈՒԹԱ՛, ամսոց թագուհին,*
*Քու հոտերով քաղցրաբոյր,*
*Փութա մայիս գեղափթիթ*
*Առած տոխակդ ու գեփիւռ՝*
*Բուրել երգել սիրավառ*
*Ըզհրաշալին Մըխիթար:*

*Եւ դուք գուսանք հայրենեաց,*
*Գըսակ ի գլուխ խընդագին,*
*Եւ դու Գողթան տաղասաց*
*Թողլով անուշ քու գինին,*
*Օ՛ն, լարեցէք ձեր կիթառ*
*Ըզվեհն երգել Մըխիթար:*

*Թող քու գետեր սըրավար՝*
*Որ կողերէդ պաղպաջուն,*
*Մասիս, գլորին դարէ դար,*
*Հոսանքներով մոլորուն,*
*Թող նուագեն անդադար*
*Զըսքանչելին Մըխիթար:*

*Այրարատայ դաշտերուն*
*Գեղափետուր թըռչուններ,*
*Եղեմարուխ գետերուն*
*Արծաթափայլ կարապներ,*
*Թող նուագէ և ձեր պար*
*Ըզհրաշալին Մըխիթար:*

*Եւ դու զուակդ հայրենեաց,*
*Առած սըրինգդ ու քընարդ*
*Աշխոյժ խըմբիդ երգասաց*
*Խառնըւէ դո՛ւն ալ զըւարթ.*
*Զա՛րկ, հընչեցո՛ւր սըրտիդ լար*
*Ըզմեծն երգել Մըխիթար:*

* * *

*Դարեր անցան տըխրագին*
*Հայ աշխարհի վերեւէն,*
*Ամպեր անցան մըթագին*
*Մասեաց ճերմակ սարերէն,*
*Մինչեւ ծընաւ Մըխիթար*
*Մինչեւ արեւն այն պայծառ:*

*Հալածեց նըժդեհ ծիծեռնակ*
*Աւերակաց վըրայ բիւր,*
*Գուժեց ճըչաց բըւիճակ*
*Իր հեծեծանքը տըխուր՝*
*Մինչեւ ծընաւ Մըխիթար*
*Մինչեւ արեւն այն պայծառ:*

*Լացին անիւնք անուշակ*
*Հին մեր սիրուն հայերուն,*
*Լացին Մեսրոպ ու Սահակ,*
*Լացաւ ամբողջ Հայութիւն՝*
*Մինչեւ ծընաւ Մըխիթար*
*Մինչեւ արեւն այն պայծառ:*

*Թափառայած անդադար*
*Կըտրելով ծով ու ցամաք,*
*Լացին որդիքդ, հայ աշխարհ,*
*Իրենց վիճակ դըժընդակ՝*
*Մինչեւ ծընաւ Մըխիթար,*
*Մինչեւ արեւն այն պայծառ:*

*Տըգիտութեան մութ խաւար՝*
*Սըփռեր իրեն ճանկեր ուր,*
*Չըքնաղ լեզուդ, հայ աշխարհ*
*Պատեր էր ժանգ ու մըրուր,*

digitised by A.R.A.R.@